**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-9/4-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **27 -ը մայիսի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Լիկվոր» ՓԲԸ-ն՝** ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն **Ս. Մաթևոսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **13.01.2020թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/4-5** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***4,989,000 (չորս միլիոն ինը հարյուր ութսունինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Լիկվոր» ՓԲԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Քոչինյան 7/9 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 2050022101151001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01201697 |
| պաշտպանության նախարարություն | գլխավոր տնօրեն |
| ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ |

10 0086 4410

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/4-5 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ., ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. |
| 9. | Ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ) ciprofloxacin (ciprofloxacin hydrochloride) | հատ | 2500 | 222 | 555,000 | | 1500 | 1000 |
| 10. | Ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ) ciprofloxacin (ciprofloxacin hydrochloride) | հատ | 1400 | 360 | 504,000 | | | 1400 |
| 14. | Մօքսիֆլօքսացին (մօքսիֆլօքսացինի հիդրոքլորիդ), moxifloxacin (moxifloxacin hydrochloride) | հատ | 1000 | 2,160 | 2,160,000 | | 1000 | |
| 15. | Մօքսիֆլօքսացին (մօքսիֆլօքսացինի հիդրոքլորիդ), moxifloxacin (moxifloxacin hydrochloride) | հատ | 2000 | 864 | 1,728,000 | 1000 | | 1000 |
| 55. | Սուլֆացետամիդ (սուլֆացետամիդ նատրիում) sulfacetamide (sulfacetamide sodium) | հատ | 100 | 420 | 42,000 | | 100 | |
| **Ընդամենը** | | | | | **4,989,000** | | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏՍ գլխավոր վարչության պետ

ՅՈՒԼՀՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Լիկվոր» ՓԲԸ
գլխավոր տնօրեն

Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/4-5 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 9. | **Ցիպրոֆլօքսացին j01ma02, s01ae03, s02aa15, s03aa07**/Ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ) ciprofloxacin (ciprofloxacin hydrochloride)/ | 33651134/508 | 555,000 | 0 | 0 | 333,000 | 333,000 | 333,000 | 555,000 | 555,000 | 555,000 |
| 10. | **Ցիպրոֆլօքսացին j01ma02, s01ae03, s02aa15, s03aa07**/Ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ) ciprofloxacin (ciprofloxacin hydrochloride)/ | 33651134/509 | 504,000 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 504,000 | 504,000 | 504,000 |
| 14. | **Մոքսիֆլօքսացին j01ma14, s01ae07**/Մօքսիֆլօքսացին (մօքսիֆլօքսացինի հիդրոքլորիդ), moxifloxacin (moxifloxacin hydrochloride)/ | 33651139/506 | 2,160,000 | 0 | 0 | 2,160,000 | 2,160,000 | 2,160,000 | 2,160,000 | 2,160,000 | 2,160,000 |
| 15. | **Մոքսիֆլօքսացին j01ma14, s01ae07**Մօքսիֆլօքսացին (մօքսիֆլօքսացինի հիդրոքլորիդ), moxifloxacin (moxifloxacin hydrochloride)/ | 33651139/507 | 1,728,000 | 864,000 | 864,000 | 864,000 | 864,000 | 864,000 | 1,728,000 | 1,728,000 | 1,728,000 |
| 55. | **Այլ դեղորայք**/Սուլֆացետամիդ (սուլֆացետամիդ նատրիում) sulfacetamide (sulfacetamide sodium)/ | 33691176/626 | 42,000 | 0 | 0 | 42,000 | 42,000 | 42,000 | 42,000 | 42,000 | 42,000 |
| **Ընդամենը** | | | **4,989,000** | **864,000** | **864,000** | **3,399,000** | **3,399,000** | **3,399,000** | **4,989,000** | **4,989,000** | **4,989,000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ [illegible] վարչության պետ

ՅՈՒԼՀՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Լիկվոր» ՓԲԸ
գլխավոր տնօրեն

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ